


Анушаван Закарян. Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916-1921 гг.). Е., изд. "Титутюн" НАН РА, 2015, 230 с.

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ, Մերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում (1916-1921 թթ.), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 230 էջ:



Բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Զաքարյանը հայ-ռուսական մշակութային կապերին անդրադարձել է քանիցս՝ վերհանելով հիմնականում այդ կապերի գրականագիտական-հրապարակախոսական և մշակութային փոխհարաբերությունները՝ պատմական իրականության հենքի վրա: Դրանցում հեղինակը քննարկում է մի շարք հիմնահարցեր՝ հատկապես Այսրկովկասում ռուս գրողների և մտավորական այլ գործիչների շփումները հայ գրականության ներկայացուցիչների և իրականության հետ, բացահայտում առաջինների մարդասիրական լայնահուն գործունեությունը և վերաբերմունքը ադետյալ հայ ժողովրդի տառապանքների նկատմամբ՝ հիմնականում պատմական միևնույն ժամանակաշրջանի կտրվածքով (XX դ. I քառորդ): Սակայն խնդիրը միայն նշված և դրանց հարակից հիմնահարցերի վերհանումը չէ, այլև դրանց

ճշմարտացի և համոզիչ վերլուծությունը, գրական-մշակութային կապերի զարգացումը պայմանավորող ներքին շարժման և օրինաչափությունների պարզաբանումը: Ընդամին, Ա. Զաքարյանը, որպես հետազոտող, այս անգամ ևս ընթացել է հիմնահարցի լուծման սեփական ուղիով: Գրական կապերի հետազոտական վաղեմի բնագավառը բովանդակային իմաստով նա հարստացրել է նոր անուններով՝ Ա. Կուլեբյակին, Բ. Լազարևսկի, Տ. Օլգենին, Ս. Ռաֆալովիչ, Պ. Սիբիրցև, Ս. Գորոդեցկի և էլի ուրիշներ, ովքեր իսկապես խոր ակոսներ են թողել հայ-ռուսական գրական-գեղագիտական, պատմական և առհասարակ մշակութային ադերսների պատմության մեջ: Ի դեպ, Ս. Գորոդեցկուն ոչ քչերն են անդրադարձել, սակայն հիմնականում շեշտադրվել է նրա ստեղծագործության հայկական շերտը:

Գրախոսվող աշխատությունը 2010 թ. հեղինակի տպագրած համանուն գրքի ռուսերեն և լրամշակված հրատարակությունն է, որ բացի հետազոտական ու փաստական նոր ծալքերի առաջադրումներից, հիմնահարցի գնահատման ոլորտն է ընդգրկում նաև ռուս ժամա-

նակակից ընթերցողին՝ միանգամայն հիմնավորված ու անհրաժեշտորեն գոհացնելով գրական կապերի ընկալման երկուստեք պահանջը և ընդլայնելով իր ընթերցողական լսարանը:

Աշխատության առաջին գլխում հեղինակը քննարկում է Թիֆլիսում և Վանում Ս. Գորոդեցկու գործունեության բնութագրական կողմերը՝ ծանոթությունը հայ իրականության, առաջին հերթին՝ Հովհ. Թումանյանի հետ, որ պետք է վերածվեր սրտառուչ բարեկամության: Ա. Զաքարյանը ուրվագծում է ռուս գրողի՝ հայկական կյանքին առնչվելու բազմաթիվ կապերը՝ կենդանի օրինակներով և որոշակի փաստերով՝ նրա անցումը Կովկասյան ռազմաճակատ, որբախնամ գործունեությունը Վանում, որտեղ գործուղվել էր որպես Համառուսաստանյան քաղաքների միության ներկայացուցիչ: Հեղինակը Ս. Գորոդեցկու կենսագրական հանգամանքները զուգակցում է նրա գաղափարական ու բանաստեղծական ներաշխարհին՝ այս ամենը ցուցադրելով շարժման ու զարգացման ընթացքի, ասել կուզի՝ այդ գործչի անհատականացման հասկանալի նպատակադրմամբ: Հատկապես Արևմտյան Հայաստանին և նրա արյունոտ ներկային ծանոթությունը, ինչպես ցույց է տալիս հեղինակը, բեկումնային նշանակություն ունեցան Ս. Գորոդեցկու մտայնության և բանաստեղծական ընկալումների համար: Այդ գործիչը մեր առջև հառնում է իր բարոյական ու ստեղծագործական ամբողջականությունը պայմանավորող էական կողմերով՝ հայրենասիրական-խանդավառ տրամադրություններից մինչև իրակ-նության սթափ գնահատականը, մինչև հակադրությունը ցարիզմին՝ իր ազգային քաղաքականության քննադատությամբ հանդերձ, ազգայնական պատրաստի հակումներից մինչև մարդասիրական աշխարհըմբռնում և դրան համարժեք գործողություններ: 1916 թ. ամռանը և աշնան ամիսներին Ս. Գորոդեցկին Վանում բացում է որբանոցներ, կազմակերպում հայ գաղթականների առողջապահական և պարենային կարիքները հոգալու դժվարին գործերը՝ դրա համար չինայելով ոչ ժամանակ և ոչ էլ ջանքեր: Խորապես համոզված լինելով ռուս և հայ ժողովուրդների բարեկամական փոխադարձ զգացումների մեջ՝ նա անում է ամեն ինչ կամ գրեթե ամեն ինչ՝ դույզն-ինչ չափով թեթևացնելու ցեղասպանության խորշակով անցած հայ բեկորների տառապանքները: Աշխատության հեղինակը համոզում է, որ հայերի պատմական դժվարին անցյալը, մշակույթն ու ավանդույթներն այդ տաղանդավոր և խորապես զգայուն անհատն ընկալում էր ամբողջականորեն և իր անկեղծ զգացումներն արտահայտում Արևմտյան Հայաստանի հոգևոր-իրական պատկերի բանաստեղծական, գեղանկարչական, հրապարակախոսական բազմակողմանի արտահայտչամիջոցներով: Ա. Զաքարյանն առանձնացնում է Ս. Գորոդեցկու՝ այս թեմաներով տպագրած հատկապես տպավորիչ բանաստեղծությունները Մոսկվայում հրատարակվող «Արմյանսկի վեստնիկ» հանդեսում, «Ռուսսկոյե սլովո» լրագրում, ինչպես և թղթակցությունները Թիֆլիսի «Կավկազսկոյե սլովո» լրագրում, որոնց ճանաչողական արժեքը դժվար է գերազնահատել ռուս ընթերցողին հայ իրականությանը և ժողովրդին առնչելու գործում:

Աշխատության երկրորդ գլխում հանգամանորեն քննարկվում է Ս. Գորոդեցկու՝ Թիֆլիսում գրական-կազմակերպական բազմակողմանի գործունեությունը: Ձարմանք են հարուցում անսպառ եռանդի տեր այդ մտավորականի ներուժի լայն ընդգրկումները, նրա խմբագրական, դա-սախոսական, թատերական և հրատարակչական բազմաձև աշխատանքները, կերպարվեստի ցուցահանդեսների կազմակերպումը և այլն: Անվարան կարող ենք ասել, որ նա 1916-1921 թթ. հանդես էր գալիս որպես Այսրկովկասյան երկրամասում առաջատար մշակութային գործիչ, որ հոգևոր նոր կապերով էր գոտևորում տեղական և ռուս մշակութային-գրական բարդ ու հակասական իրողությունները՝ պատերազմների ու հեղափոխական դարաշրջանի բերած անսպասելի ու կտրուկ շրջադարձերի պայմաններում: Կուզենայինք առանձնացնել աշխատության հեղինակի վերհանած երկու կարևոր հանգամանքները՝ երկրամասի քաղաքակիրթ ազգերի հետ ռուսական մշակույթի կապերի հարատևմանն ի նպաստ Ս. Գորոդեցկու մեծ աշխատանքը և ապա՝ տառապած հայության նյութական ու հոգևոր արժեքների պահպանության գերխնդիրը այս մեծ մտավորականի և հայասերի բովանդակ գործողությունների շրջագծում: Շարա-դրանքը առարկայական որակներ է ստանում վկայակոչումներով՝ վերաբերեն դրանք 1910-ական թթ. Թիֆլիսի գրական ուղղություններին («Բանաստեղծների համաքարություն»), Կովկասի, ռուսական և եվրոպական գրականությունների գնահատականին կամ գեղագիտական ըմբռնումներին (ակմեիզմ, «Ակմե» ժողովածուն) և այլն: Այս բոլոր առաջադրումների մեջ ընդգծվում է ռուս մտավորականի մտահոգությունների կենտրոնում գտնվող հայության վերածնության գաղափարը: Այստեղ ուրվագծվում է հեղինակի՝ Գորոդեցկու կյանքի և գործունեության բացահայտման ճիշտ ընտրված մեթոդը, այն է՝ անհատի կենսագրական հանգամանքների էական նշանակությունը նրա նախասիրությունների և անհատականության բնութագրման համատեքստում: Այս տեսակետից շատ հատկանշական են Հովհ. Թումանյանի և Ս. Գորոդեցկու սերտ բարեկամության վերհանումն ու գնահատականը գրախոսվող աշխատության մեջ: Այս թեման, որի կարևորության մասին ակնարկեցինք վերը, իրեն հաճախ է զգացնել տալիս գրքի ողջ շարադրանքի ընթացքում: Հիրավի, Հովհ. Թումանյանը, ինչպես ցույց է տալիս հեղինակը, մի հայտնի չափով ուսումնառության յուրահատուկ դպրոց է եղել Ս. Գորոդեցկու համար՝ ավագ բարեկամի իր ազդեցիկ նկարագրով և ներշնչած հոգևոր արժեքներով:

Առաջ անցնելով ասենք, որ խնդրո առարկա հարցը Ա. Ջաքարյանն արծարծում է նաև գրքի հինգերորդ գլխում՝ վերհանելով Գորոդեցկու բացառիկ կարևոր աշխատանքը Հովհ. Թումանյանի մի շարք ստեղծագործությունների ռուսերեն թարգմանության գործում: Ավելին, Թիֆլիսում Ս. Գորոդեցկին շփվում է հայ ականավոր մտավորականների հետ (Ա. Շիրվանզադե, Լ. Շանթ, Վ. Սուրենյանց, Ե. Թադևոսյան, Հովհ. Աբելյան, Մ. Աբեղյան, Ն. Ադրայան և այլք), ինչպես և ծանոթանում վրացական մշակույթին ու նրա ներկայացուցիչներին: Ի դեպ, գրքում, ըստ հարկին և Ս. Գորոդեցկու գործունեության բնութագրի

առումով, պատշաճ ուշադրություն է դարձված Թիֆլիսում հայ և վրաց գրական ու մշակութային շփումներին:

Երրորդ գլխում Ս. Ջաքարյանն ընդհանրացման ուժ է տալիս իր այն կարևոր դիտարկմանը, որ հայկական թեմաներով Ս. Գորոդեցկու ստեղծագործությունը լուրջ նշանակություն է ունեցել ժամանակի ռուս մտավորականության մեջ հայամետ տրամադրությունների խորացման համար:

Անշուշտ, պետք է առանձնացնել Ս. Ջաքարյանի դրվատելի ջանքերը՝ հայ և ռուս լայն հասարակայնությանն անձանոթ մնացած՝ Ս. Գորոդեցկու հրապարակախոսական հոդվածները վերհանելիս (չորրորդ գլուխ): Նա առաջին հերթին նկատի ունի Հայաստանի և Հայկական հարցի լուսա-բանումները, ինչպես և ցեղասպանության թեման, որ ռուս հրապարակախոսը շոշափում է իբրև ականատես՝ անկեղծորեն, վշտահար և ցասումնալի: Աշխատության հետագա էջերում ցույց է տրվում, որ նույնքան անկեղծ և կտրուկ էր Ս. Գորոդեցկին Թիֆլիսի «Ռուսկի կուր»-ի հակահայկական, սևհարյուրակային տրամադրություններին հակադրվելիս, ցարական որոշ գեներալների՝ միայն Հայաստանը հայաթափելու մարտա-վարությամբ հիմնավորված և ռազմական անհրաժեշտությամբ չարդա-րացված՝ Արևմտահայաստանից ռուսական զորքերի նահանջները բացահայտելիս: Այստեղ ևս ի հայտ են գալիս Արևմտահայաստանի եղերական ճակատագրի հետ կապված՝ Հովհ. Թումանյանի և Ս. Գորոդեցկու ընդհանուր մտահոգությունները 1917 թ. դեկտեմբերի վերջին Սովժոդկումի հրապարակած «Թուրքահայաստանի մասին» դեկրետի առթիվ: Հայտնի է, որ Կովկասյան ռազմաճակատի վերացումը Արևմտահայաստանի հայ բեկորների վերացումն էր լինելու միանգամայն, և որի դրամատիկ արձագանքն էին Հովհ. Թումանյանի՝ Ս. Գորոդեցկուն ուղղված բաց նամակը և վերջինիս պատասխանը «Կավկասկոյե սլովո» թերթում: Անտարակույս, Ս. Գորոդեցկին արտահայտում էր ռուս ոչ կուսակցական, իսկապես մարդասեր մտավորականության խոհերը, երբ արևմտահայ մնացորդացը թուրքերին և քրդերին ի կեր թողնելու քաղաքականությունը համարում էր «մութ, չգիտակցված հնազանդեցում տարերային ուժերին, որոնք ներկայումս ուղղորդում են ողջ Ռուսաստանը» (էջ 208): Ս. Գորոդեցկին քաղաքացիական նույն առաքիլությունն ի հայտ է բերում, հեղինակի իրավացի հավելումով, այն ժամանակ, երբ «Նոր վերք» հոդվածում հակադրվում է Ռուսաստանում գործող հայկական բոլոր կազմակերպությունների լուծարման մասին դեկրետին: Ավելացնենք, որ Ս. Գորոդեցկու հրապարակախոսության այս շերտը Ս. Ջաքարյանը պարզում է ըստ ամենայնի՝ բացահայտելով նրա քննադատական ազնիվ կեցվածքը վրաց ազգայնականների՝ Ջավախքի հայերի հանդեպ վարած ռազմավարության նկատմամբ: Ի դեպ, հեղինակը Ս. Գորոդեցկու 1918-1919 թթ. հրապարակախոսության մեջ հայտաբերում է քաղաքագիտական անաչառության և հայ ժողովրդի հանդեպ անդավաճան բարեկամության նոր որակներ: Արդիական արժեք ունի նրա «Ղարաբաղ» հոդվածը, որ հնարավորություն է տալիս

Ճշմարտացի ներկայացնելու հրապարակախոսի մոտեցման երկու կողմերը՝ Ղարաբաղի նշանակության վերհանումը հայերի ազգային ինքնության, և մյուս կողմից՝ մշակութային-էթնիկական ամբողջականության տեսակետներից: Ըստ էության, պատմական փորձությունների պահին (որոնց միջով այսօր ևս անցնում է հայ հանրությունն ամենուրեք), ինչպես եզրակացնում է Գորոդեցկին, ինքնապահպանության գործոն են դառնում նրա հնամենի ներուժը, ազգային մշակույթի հարատևումը՝ իր վաղեմի կենտրոններով, որոնցից մեկն էլ հայության համար ռուս գործիչը համարում է Ղարաբաղը:

Աշխատության առավել տպավորիչ էջերից են Գորոդեցկու՝ Հայկական հարցին նվիրված հրապարակախոսական հոդվածների և դասախոսությունների վերլուծությունները: Դրանցում Ս. Գորոդեցկին հանդես էր գալիս որպես Հայկական հարցի գիտակ և համակողմանի վերլուծաբան: Նշենք, որ Բաթումում 1919 թ. հուլիսի 15-ին Հայկական հարցի մասին կարդացած զեկուցման մեջ աչքի են զարնում ոչ միայն նրա լայն իմացականությունը՝ քննարկած հարցի պատմական տեսանկյունների ընդգրկմամբ, այլև դրա արդիական քաղաքական նշանակության բացահայտումները: Հայաստանը ծանր կորուստների գնով ձեռք էր բերել իր ազգային պետականությունը՝ Հայաստանի, Հանրապետությունը, և Գորոդեցկին ընդառաջում էր հայերի ազգային բաղձանքներին՝ հիմնավորելով նրա՝ ինքնուրույն ապրելու հնարավորություններն ու իրավունքը, Հայաստանի երկու (արևմտյան և արևելյան) մասերի միավորման անհրաժեշտությունը, մահմեդական աշխարհի հարևանությամբ հայերի խաղաղ գոյակցության կարելիությունները և այլն: Ա. Ջաքարյանն իրավացիորեն բարձր է գնահատում Ս. Գորոդեցկու այս բանախոսությունը, դրա ոչ միայն մտավոր, այլև քաղաքական հրատապ արժեքը: Հիրավի, դեռևս 1919 թ. հունվարից սկսվել և այդ օրերին շարունակվում էր Փարիզի Հաշտության կոնֆերանսը, որ պետք է քննարկեր Հայկական հարցը և տար գործնական լուծումներ: Անկախ և՛ մեկի, և՛ մյուսի գրոյական հետևանքներից, Ս. Գորոդեցկու բանախոսությունն ընդառաջում էր կոնֆերանսից հայերի ունեցած ակնկալիքներին՝ անմիջականորեն նպաստելով դրանց ձևակերպմանը՝ ռուս ազնվագույն մտավորականի հայեցվածքով, որ այսօր ևս շարունակում է մշտական արժեք մնալ մեր ժողովրդի համար:

Գրախոսվող աշխատության ժամանակագրական սահմաններում Ս. Գորոդեցկու գործունեության վերջին շրջանը քննարկվում է աշխատության VI և VII գլուխներում: Ռուս գործիչը անդրդվելիորեն հետևողական էր իր համակրանքներում, հատկապես մեծ համակրանքներում, որտեղ միտքն ու զգացումները բնավ չեն հակասում միմյանց: Նկատի ունենք 1919 թ. ապրիլին Երևանում նրա կարդացած դասախոսությունները՝ «Վանի ստվերները» և «Ժամանակակից հայ քնարերգությունը» թեմաներով, նաև «Ճանապարհորդություն դեպի Երևան» հոդվածաշարին նվիրված էջերը: Անկախ Առաջին հանրապետության ներքին ու արտաքին քաղաքական իրադրության դժվարություններից և շտապ լուծում պահանջող հարցերից, Գորոդեցկին լավատեսորեն, միաժամանակ սթափ հայացքով է

նայում նորանկախ երկրի առօրյային: Գրքի հեղինակը այստեղ ևս ընթերցողի ուշադրությունը գամում է նրան առավել հուզող հիմնահարցերին՝ երկրի ինքնուրույն կյանքի կազմակերպմանը, որբերի և գաղթականների կենսապահովման ձեռնարկներին, այնուամենայնիվ, սկսված շինարարական աշխատանքներին, մշակութային կյանքի աշխուժացմանը, անգամ քրեական իրադրության մեղմացմանը հետամուտ իշխանությունների համառությանը:

Հայ-ռուսական բարեկամությանը անկեղծորեն հավատացող այդ գործչի կենսագրությունն ու գործունեությունը Ս. Զաքարյանը հասցնում է մինչև 1921 թ. կեսը, երբ Ս. Գորոդեցկին վերջնականապես տեղափոխվում է Մոսկվա՝ հետևում թողնելով իր հիշարժան գործունեության՝ պատմականորեն հագեցած մի ամբողջ դարաշրջան:

Ս. Զաքարյանի աշխատությունը նշված դարաշրջանի հայ-ռուսական հոգևոր ու մշակութային, ինչպես և մտավոր առնչությունների հիմնահարցի անհրաժեշտ մի օղակն է, որ և՛ ժամանակի, և՛ բուն այդ առնչությունների բացահայտման տեսակետից ցարդ բաց էր մնացել մեր մշակույթի պատմաբանների գնահատման շղթայում: Եվ հենց դրանով էլ այն անհրաժեշտ է ու ժամանակին հայտնված, որ ենթադրում է հիմնահարցի շարունակելիության պահանջը՝ Ս. Գորոդեցկու գործունեության հետագա շրջանի և հայ-ռուսական մշակութային կապերի խորացման ասպարեզում դրա նշանակությունը վերհանող հետազոտության պահանջը:

Մեկ-երկու դիտարկում-նկատառում այս, ըստ ամենայնի հաջողված և գիտական լուրջ աշխատության վերաբերյալ: Տողատակերը երբեմն անհարկի ծանրաբեռնված են, մի հանգամանք, որ վերաբերում է նաև Ս. Գորոդեցկու հոդվածներից արված ընդարձակ մեջբերումներին: Ակնհայտ է, որ հեղինակը շատ ավելի հարուստ տեղեկատվություն ունի իր ուսումնասիրության բովանդակային կողմի մասին, քան հասցրել է շարադրել աշխատության ենթադրած շրջանակների սահմաններում: Ցանկալի կլիներ, այս իմաստով, Ս. Գորոդեցկու հոդվածների ամբողջական ժողովածուի հրատարակությունը բնագրով, որ անառարկելիորեն կարող է իրականացնել նրա կենսագրությունն ու ստեղծագործությունը վերհանող՝ նույն այս գրախոսվող աշխատության հեղինակը:

Վերջում ավելացնենք, որ գրախոսվող աշխատությունը հրատարակության են երաշխավորել ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհուրդը և Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը՝ Հայագիտական ուսումնասիրությունների համահայկական հիմնադրամի աջակցությամբ:

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ